

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՓ

Սոխակ .

Գարնան գեղեցիկ իրիկուն մը պըզտի տղուն մէկը իւր վարպետին հետ անտառի մը եզերքը կը պտըտէր: Յանկարծ սոխակի ձայն թուեցաւ. « Ի՛նչ գեղեցիկ ներգաշնակութիւն, ըսաւ Պօղոսը, երկայն ժամանակ հիացմամբ մը տիկ ընելէն ետքը. հետաքրքրութիւնս կը շարժի այս գեղեցկաձայն երգը մօտէն լսելու. քիչ մը առաջ երթանք, ուսկից կու գայ այս ձայնը: — Աղէկ զգուշացիր, ըսաւ վարպետը, սոխակը այնպէս վայրի թռչուն մըն է, որ մեր քիչ մը մօտենալը բաւական է խըրտեցնել զինքը, ու երգը դադրեցնել տալ: — Բայց ինչո՞ւ համար, ըսաւ տղան, ինչո՞ւ այս թռչունը, որ իր երգին ճոխութեամբ ուրիշներունը կը խափանէ, բուռի պէս միայնութիւն կ'ախորժի: Ինչո՞ւ իր քաղցը ձայնը մեր բնակութիւններէն հեռու կը հնչեցնէ, մինչդեռ մեր պարտիզին փոքր ծառերն անգամ լեցուն են անհամ և ձանձրացուցիչ ճռտողիւններով, պզտի թռչնիկներու: Ասիկայ, պատասխանեց վարպետը, այն առածը մեզի իմացունելու համար է, որ ստոյգ արժանաւորութիւնը երկչոտ է, և կը սիրէ առանձին կենալ. և զայն ունենալու համար պէտք է գիտնալ թէ ինչ կերպով ստանալու է:

ՊՈՒԼԱՆԺԷ

Տ՝ Ալամպերի տղայոռքիւնը:

17 17 ին նոյեմբեր ամսոյն մէջ, Բարիզի սուրբ Յովհաննէս եկեղեցւոյն մեծ դրան առջև նոր ծնած տղայ մը գըտնուեցաւ. ամեն անցնող դարձող մարդիկը հոն ժողուելով, մէկ շրջանակ մը

ձևացուցին այս դժբաղդ տղուն չորս կողմը: Ոստիկանութիւնը վրայ հասաւ, տեսաւ այս տղան. և ուղեց խրկել փողոցը գտնուած տղայոց բնակարանը. ապակեգործի խեղճ կին մը, որ հոն ներկայ էր, այս տղուն հոգը վրան առնել ուղեց. ոստիկանութիւնը գովեց իր մարդասիրութիւնը և իրեն յանձնեց տղան: Այս ապակեգործ կինը իր քովը առած աղէկ խնամք տարաւ վրան իբրև թէ իրեն տղան ըլլար, դուր գուրալով վրան ամենայն մայրենի խանդաղատանք, յառաջ քան անոր մտաւորական ցոյցերն՝ ոգւոյն կարողութիւնը իմանալու: Այս պզտիկ որբը քիչ ատենէն ցուցուց իր անակնունելի հանճարոյն ցոյցերը: Այն վարպետը որուն քով որ ինքը կը խրկուէր, յայտնեց անկեղծութեամբ որ ալ ուրիշ բան չունէր ինքը այս տղուն սորուեցնելու. այն ժամանակը դեռ տասը տարեկան էր տղան: Այն ատեն զինքը դրին Մազարենի վարժարանը, ուր շուտ մը մեծ յառաջադիմութիւն ցուցուց. անանկ որ տասուրիք կամ տասնըչորս տարուան եղած ատենը կատարեալ մարդու կարգ անցաւ: Փիլիսոփայութիւնը պատճառ եղաւ, որ իր ուսումնականութեան ունեցած յարմարութիւնը յայտնուեցաւ: Իրեն ապագան ապահովցնելու համար. իրաւագիտութիւն և բժշկութիւն սորուեցուցին. բայց ինքը անոնք սորուելէն ետքը դարձաւ նորէն իր բնական յօժարութեանը ետեւ ըլլալու: Դեռ երիտասարդ եղած ժամանակը, իրեն առաջարկութիւն մը եղաւ Պեռլինի ճեմարանէն. որուն նիւթն էր, հովերուն ընդհանուր պատճառը: Այս ընկերութիւնը լիովին գոհ ըլլալով իրեն գրութենէն, ոչ միայն պսակեց զմատենագիրը՝ այլ նաև ճեմարանին անգամ ընտրեց մեծամեծ գովասանք և առանց վիճակարկութեան:

Այս պատանին որ այսպիսի փառաւոր կերպով կը հռչակուէր, շատ երևելի եղաւ իբրև ուսումնական և իբրև մատենագիր. իր վարուցը պատիւ ընող առաքինութեանց մէջ, նշանաւոր եղաւ